ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/39-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ5 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
16	«Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ	Մարզական կոշիկներ	«Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ	Բոթաս սև, անճիթք Բաղկացած է կոշկերեսի քթամասից, հետևամասից, արտաքին գոտուց, փափուկ լեզվակից, հիմնական ներդիրից, մաշվածադիմացկուն ներբանից /տակացուից/ և հանովի-դնովի ներդիրից: Գույնը՝ ամբողջությամբ սև: Քթամասը մշակված է ձևավոր առաջամասով, օդափոխման արտաքին անցքերով: Լեզվակը ամրացված է առաջնամասին: Բոլոր դետալները իրար միացվում են սոսնձով և կարվում են մաշվածադիմացկուն թելով, որի կարը պետք է թույլ չտա ջրի և խոնավության ներթափանցումը կոշիկի ներսամասի դետալներ: Կոշիկի երեսացուն պետք է լինի խոշոր եղջերավոր անասունի կաշվից՝ սև գույնի, բարձր որակի, բնական, մշակված մակերեսով: Կոշիկը պետք է ապահովի օդափոխանակությունը, այսինքն՝

					օդագոլորշանցիկությունը և ջերմահաղորդականաությունը, որը կապահովի քրտնակլանումը: Կողային արտաքին գծիկների հաստությունը 12մմ (կաշվին փոխարինող նյութից), կրունկի փափկեցնող վերնամասը՝ 1,4մմ, իսկ ներսի հատվածինը՝ 1,2մմ կաշվին փոխարինող նյութով, կրունկի ձիգ կանգնելու, ամրացման նյութը՝ չոր և փափուկ պոլիէթիլենի համադրումով: Տակացուն սև է , պոլիուրետանային: Քուղերը՝ ամուր, արհեստական թելերի համակցմամբ, ծայրակալները պոլիմերային նյութով, ամրացված: Ունի 6*2 անցք՝ կոշիկը թելելու համար: Ճիտքը և քթամասը կարակցված են կարով, որի ամրությունը առնվազն 150Ն/սմ է: Կրնկամաս-ը, ճիտքն ու հետևամասի արտաքին գոտին կարակցված են 2-4 կարով, որի ամրությունը առնվազն 115 Ն/սմ է: Ներբանն ամրանում է բարձր ճնշմամբ սոսնձման եղանակով: Ներբանի խզման բեռնվածությունը բարձր ճնշմամբ սոսնձման եղանակով ամրացման դեպքում առնվազն 110-120 Ն/սմ է: Ներբանը պետք է ապահովի չսայթաքելու գործոնը և ապահովի հետքերի զարդանախշերից հնարավորինս արագ ինքնամաքրումը: Կոշիկի աջ ու ձախ զույգը պետք է լինի միևնույն չափսերի, լայնության և կառուցվածքի: Մատակարար կազմակերպությունը պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո, պատասխանատու ստորաբաժանմանը պետք է ներկայացնի մատակարարվող ապրանքատեսակի երկուական զույգ՝ հսկման նմուշներ, մատակարարվող տեսականուց (նմուշը պետք է լինի 41 և 43 չափսի), որոնք պետք է

				համապատասխանեն տեխնիկական բնութագրում նշված պահանջներին: Ներկայացված նմուշները համաձայնեցվում է Պատվիրատույի հետ, որից հետո Պատվիրատուն մատակարարին տրամադրում է կոշիկի քանակները ըստ չափսերի : Արտադրվում են 36-46 չափսերի: Փաթեթավորումը ստվաթղթե արկղերով, 1 արկղի մեջ մինչև 10 զույգ, արկղերը պետք է լինեն պիտակավորված (նվազագույնը 6սմ*10սմ չափսի), որի վրա պետք է տեսանելի նշված լինի տեսականու անվանումը, պայմանագրի կոդը, չափսը, մատակարար և/կամ արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը: Մատակարարը պարտավոր է երաշխավորել մատակարարված կոշիկի որակի համար, կրման /շահագործման/ ամբողջ ժամանակահատվածի ընթացքում (8 ամիս), իսկ ժամկետից շուտ շարքից դուրս եկած քանակը անհատույց փոխարինել նորերով 30 օրացուցային օրվա ընթացքում: Փոխարինման ժամկետը սկսվում է հաշվարկվել պատվիրատուի կողմից գրավոր տեղեկացվելու հաջորդ աշխատանքային օրվանից:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

«Гарун кари фабрика» ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏվ-ԷԱՃԱՊՁԲ-26/39-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ5 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
16				